



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ**

N 54 - Ա
28 մարտի 2014 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 4-Ի N 15-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասի և Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի դրույթներով

որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2011 թվականի փետրվարի 4-ի <<Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի երեխայի տարիքը որոշող հանձնաժողովի կազմը հաստատելու մասին>> N 15-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝ որոշման 1-ին կետը շարադրել նոր խմբագրությամբ՝

<<1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի երեխայի տարիքը որոշող հանձնաժողովի կազմը.

- Գրիգորյան Ռ. – մարզպետ, նախագահ
- Մելքոնյան Ա. – մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ, քարտուղար
- Բադալյան Գ. – մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ
- Գալոյան Մ. – մարզպետարանի աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի վարիչ
- Խաչատրյան Ս. – մարզպետարանի աշխատակազմի ԱՍԱ վարչության սոցիալական ապահովության բաժնի վարիչ
- Այվազյան Մ. – մարզպետարանի աշխատակազմի ԱՍԱ վարչության առողջապահության բաժնի վարիչ
- Լազյան Ս. – ՀՀ ոստիկանության Գեղարքունիքի մարզային վարչության ոստիկանության Գավառի բաժնի անչափահասների գործերով բաժանմունքի պետ /համաձայնությամբ/>>:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝

Ռ. ԳՐԻԳՈՐՅԱՆ